



HY

# Մատնահետքեր եւ Eurodac

Տեղեկատվություն երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր անօրինական կերպով բնակվում են անդամ պետությունում՝ համաձայն թիվ 603/2013 կանոնակարգի (ԵՄ) 29(3)-րդ հոդվածի

Եթե հայտնաբերվում է, որ անօրինական կերպով բնակվում եք դուբլինյան երկրում<sup>1)</sup>, ապա իշխանությունները կարող են վերցնել Ձեր մատնահետքերը և հանձնել մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: Դա կատարվում է միայն այն նպատակով, որ պարզվի, թե արդյոք նախկինում դիմել եք ապաստանի համար: Ձեր մատնահետքերի տվյալները չեն պահվի Eurodac տվյալների բազայում, սակայն եթե նախկինում դիմել եք ապաստանի համար այլ երկրում, Ձեզ կարող են ետ ուղարկել տվյալ երկիր:

Եթե Ձեր մատնահետքերը հստակ չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը կարող են հետագայում կրկին վերցվել:

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Ձեր տվյալները կստանա միայն Eurodac կենտրոնական համակարգը: Եթե ապագայում ապաստան խնդրեք այլ դուբլինյան երկրում, ապա Ձեր մատնահետքերը կրկին կվերցվեն՝ Eurodac փոխանցելու նպատակով: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի ԵՄ-ից կամ ասոցացված պետություններից դուրս որևէ այլ պետության կամ կազմակերպության:

---

1) Այն տարածվում է ողջ Եվրոպական Միության վրա (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Զուլնաստան, Զուլնգարիա, Մալթա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Շվեդիա, Չեխիայի Հանրապետություն, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրների վրա (Լորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն):

**©Եվրոպական Միություն 2014**  
**Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:**

# Կոնտակտային տվյալներ

## **Eurodac հսկիչի և իր ներկայացուցչի նույնականություն**

Կոնտակտային կետեր՝ Ոստիկանության  
ազգային խորհուրդ (Poliisihallitus) և  
Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն  
(Maahanmuuttovirasto)

## **Վերահսկողի գրասենյակի կոնտակտային տվյալները,**

+ 358 295 480 181

Poliisihallitus (Ոստիկանության ազգային  
խորհուրդ)

PL 22, FI-00521 Helsinki

kirjaamo.poliisihallitus@poliisi.fi

Maahanmuuttovirasto (Ֆինլանդիայի

ներգաղթի ծառայություն)

PL 18, FI-00581 Helsinki

+358 295 419 600

Այդ հարցով ծառայության համարը՝

+358 295 419 627, Երկ-Յնգ 10-11

www.migri.fi

**Եթե մեր իշխանությունները գտնեն, որ  
միջազգային պաշտպանության համար  
պետք է դիմեիք այլ երկրում, և որը պետք  
է պատասխանատու լինել Ձեր դիմումը  
քննելու հարցում, ապա Ձեզ կտրամադրվի  
առավել մանրամասն տեղեկատվություն  
այն մասին, թե ինչ ընթացակարգ է  
հաջորդելու և այն ինչպիսի ազդեցություն  
կունենա Ձեր և Ձեր իրավունքների վրա:**

## **Ազգային վերահսկողության մարմնի (տվյալների պաշտպանության)**

## **Կոնտակտային տվյալներ**

Tietosuojavaltutetun toimisto

(Տվյալների պաշտպանության հարցերով  
օմբուդսմեն)

PL 800, FI-00521 Helsinki

+ 358 295 666 700

Տեղեկատվական ծառայություն՝

+358 295 616 670,

Երկ-Յնգ 9-11 և 13-15, Ուրբ 9-12

tietosuoja@om.fi

www.tietosuoja.fi



«Ես գտնվում  
եմ Դուբլինի  
ընթացակարգում. ի՞նչ  
է դա նշանակում»:

Բ

Տեղեկատվություն միջազգային պաշտպանության  
համար դիմողների վերաբերյալ Դուբլինի  
Կանտակարգի մասին՝ համաձայն թիվ 604/2013  
Կանտակարգի (ԵՄ) 4-րդ հոդվածի



**Rajavartiolaitos**  
Gränsbevakningsväsendet  
The Finnish Border Guard